

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**  
**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՐԱՅԻ ԵՎ**  
**ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ**  
**ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 30.01.2017Թ.ՆԻՍՏՈՒՄ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**  
**(2017-2021թթ.) ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԼԱՆ-ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

<b>ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 1. ԲԱՐՁՐՈՐԱԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ</b>						
<b>Խնդիր 1.1. Իրականացնել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կրթական ծրագրերի վերափոխումներ</b>						
<b>№</b>	<b>Գործողություն</b>	<b>Ժամանակացույց</b>	<b>Պատասխանատու</b>	<b>Ռեսուրս (մարդկային, ֆինանսական)</b>	<b>Վերջնարդյունք</b>	<b>Արդյունքի գնահատման ցուցիչ (ԱԳՑ)</b>
1.	Արմատավորել ՄԿԾ-ների մշակման, մշտադիտարկման, դրանց իրականացման արդյունավետության գնահատման և բարելավման գործընթացներն ինստիտուտում՝ ներառելով շահակիցներին և վերհանելով աշխատաշուկայի պահանջները:	2019-2020 ուստարի	ՀՖԿՍՊԻ-ի գիտական խորհուրդ	Աշխատանքային խմբեր	ՄԿԾ-ի արդյունավետության գնահատման արդիականացված և գործող կարգ	ՄԿԾ-ի մշակման և վերանայման, արդիականացման հաստատված կարգեր, դրանց բարելավման գործընթացների մշտադիտարկման հաշվետվություններ:
2.	Տարանջատել բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի վերջնարդյունքները բոլոր մասնագիտության կրթական ծրագրերում (այսուհետ՝ ՄԿԾ)՝ ներդնելով կրթական ծրագրերի միջազգային բենչմարքինգի լավագույն փորձը:	2017-2018 ուստարի	Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր	Աշխատանքային խումբ	Հստակ տարանջատված վերջնարդյունքներ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում	Բենչմարքինգի ենթարկված բուհերի ցանկ, տվյալների վերլուծություններ: Կրթական վերջնարդյունքների հաստատված ցանկեր բոլոր ՄԿԾ-ների համար:
3.	Ապահովել դասավանդման և ուսումնառության մեթոդների կապն ուսումնառության վերջնարդյունքների և գնահատման մեթոդների հետ՝ ներդնելով ուսանողակենտրոն մոտեցումներ: Իրականացնել պրոֆեսորադասախոսական կազմի անհրաժեշտ վերապատրաստումներ:	2017-2018 ուստարի	Դեկանատներ Ուսումնական մաս ՈԱ բաժին Ուսխորհուրդ	Աշխատանքային խումբ	Մշակված և ներդրված ուսանողակենտրոն մոտեցումներով դասուցման և ուսումնառության վերջնարդյունքների գնահատման համակարգ	Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության հաստատված քաղաքականություններ և ընթացակարգեր: Վերապատրաստված դասախոսական կազմ:
4.	Մշակել ուսանողների գնահատման նոր համակարգ՝ կարևորելով գնահատման հստակ չափանիշների և ընթացակարգերի	2018-2019 ուստարի	Դեկանատներ Ուսումնական մաս ՈԱ բաժին	Աշխատանքային խմբեր	Հաստատված և գործող գնահատման նոր կարգ	Վերանայված և հաստատված գիտելիքների գնահատման նոր համակարգ:

	առկայությունը՝ ելնելով յուրաքանչյուր առարկայի առանձնահատկությունից:		Ուսխորհուրդ			
5.	Տարածել բուհի ներսում առկա ՄԿԾ-ի մշակման և վերանայման, արդիականացման ու բարելավման լավագույն փորձը:	2017-2018 ուստարվա 2-րդ կիսամյակ	ՈԱ բաժին Ուսումնական մաս Ուսումնամեթոդական խորհուրդ, ուսխորհուրդ	Աշխատանքային խմբեր	ՄԿԾ-ի մշակման և վերանայման, արդիականացման ու բարելավման լավագույն փորձի տարածումը ինստիտուտում	Փորձի տարածման աշխատաժողովների և հանդիպումների արձանագրություններ: Կրթական ծրագրերի մշտադիտարկման հաշվետվություններ:
6.	Ներդնել ՄԿԾ-ների մշակման միջառարկայական մոտեցումներ:	2017-2018 ուստարվա 2-րդ կիսամյակ	Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր	Դեկանատներ Ուսմեթոդ. խորհուրդ Ուսմաս Պրակտիկայի և կարիերայի բաժին Ուսխորհուրդ	Միջառարկայական ՄԿԾ և միջառարկայական դասընթացների մշակման պրակտիկա	Մշակված մեկ միջառարկայական ՄԿԾ և միջառարկայական դասընթացներ:

**Խնդիր 1.2. Ապահովել ուսումնամարզական գործընթացի և գիտահետազոտական գործունեության ստեղծագործական միասնականությունը**

1.	Բարելավել սովորողների ուսումնամարզական և գիտահետազոտական աշխատանքի պայմանները և ղեկավարման մոտեցումները:	2018-2019 ուստարվա 2-րդ կիսամյակ	Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր	Դեկանատներ Մասնագիտական ամբիոններ	Սովորողների ուսումնամարզական և գիտահետազոտական բարելավված պայմաններ:	Ուսումնամարզական և գիտահետազոտական աշխատանքների պայմանների արդիականացում:
2.	Գործարկել ակադեմիական ազնվության խրախուսման և գրագողության կանխարգելման ընթացակարգեր:	2017-2018 ուստարվա 1-ին կիսամյակ	Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր	Աշխատանքային խումբ	Հաստատված և գործող ակադեմիական և գրագողության կարգ:	Ակադեմիական ազնվության խրախուսման և գրագողության կանխարգելման հաստատված կարգեր, ընթացակարգեր և գործիքներ:
3.	Մշակել համապատասխան մեխանիզմներ՝ ընդլայնելու ուսանողների թիմային հետազոտական աշխատանքները:	2017-2018 ուստարվա 2-րդ կիսամյակ	Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր	Դեկանատներ Ամբիոններ ՈւԳԸ Ուսխորհուրդ	Հաստատված և գործող հայեցակարգ	Թիմային հետազոտական աշխատանքները կարգավորող ընթացակարգեր:
4.	Բարելավել հետազոտական աշխատանքների ուղղվածությունը ֆիզկուլտուրային-մարզական գործունեության բոլոր ոլորտներում:	2017-2018 ուստարվա 2-րդ կիսամյակ	Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր	Դեկանատներ, ամբիոններ, ՈւԳԸ, ուսխորհուրդ	Առնվազն 4 աշխատանք:	Հետազոտական և ուսումնական ինտեգրված բաղադրիչներով նորարարական կրթական և հետազոտական միջավայր:
5.	Ստեղծել դասավանդման և ուսումնառության աջակցման խորհուրդ՝ դասախոսական կազմի մանկավարժական կարողություններն	2017-2018 ուստարվա 2-րդ	Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր	Դեկանատներ Ուսումնամեթոդական խորհուրդ	Իրականացված և վերլուծված հարցումների արդյունքներ	Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների

	ու հմտությունները արդիականացնելու ու գարգացնելու նպատակով:	կիսամյակ		Ուսխորհուրդ	Հրապարակված կայքում	բարելավված արդյունքներ:
<b>Խնդիր 1.3 Սպորտային քոլեջի, ավագ դասարանների հիմնադրում, մանկավարժական պրակտիկայի, կարիերայի և մասնագիտական կողմնորոշման ու որակի ապահովման միասնական կառուցակարգերի ներդրում:</b>						
1.	Բարելավել մանկավարժական, մասնագիտական ու կլինիկական պրակտիկայի, կարիերայի և ուսումնական կողմնորոշման գործընթացների կառավարման կառուցակարգերը:	2018-2019 ուստարվա 1-ին կիսամյակ	Պրակտիկայի և կարիերայի բաժին	Դեկանատներ, Մասնագիտական ամբիոններ, Մեթոդական խորհուրդ, Ուսխորհուրդ	Վերանայված և գործող համապատասխան կանոնակարգեր	Մանկավարժական, մասնագիտական ու կլինիկական պրակտիկաների գործընթացների կառավարման լրամշակված կանոնակարգեր:
2.	Ուսանողների ուսումնառության կողմնորոշման ուղղությամբ խորհրդատուների ինստիտուտի ձևավորում:	2018-2019 ուստարվա 1-ին կիսամյակ	Պրակտիկայի և կարիերայի բաժին	Ամբիոններ, խորհրդատուներ, ուսխորհուրդ	Ձևավորված և կանոնակարգված խորհրդատուների ինստիտուտ	Ուսանողների խորհրդատուների ինստիտուտի լրամշակված և հաստատված կանոնակարգ և աշխատակարգեր:
3.	«Ինստիտուտ-գործատու» համագործակցության համակարգի լայնորեն ներդրում:	2018-2019 ուստարվա 1-ին կիսամյակ	Պրակտիկայի և կարիերայի բաժին	Մասնագիտական ամբիոններ, ուսխորհուրդ	Իրականացված աշխատաժողովներ, Հաստատված ժամանակացույց	Գործող «Ինստիտուտ-գործատու» համագործակցության համակարգ:
4.	Մշակել ուսանողների թղթապանակի տեխնոլոգիա և ներդնել ուսումնական գործընթացում:	2018-2019 ուստարվա 1-ին կիսամյակ	Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր	Դեկանատներ Ուսխորհուրդ Ուսմաս	Հաստատված և գործող ուսանողի թղթապանակ	Գործող ուսումնական վեբ հարթակ:
5.	Մշակել ՀՖԿՍՊԻ -ի ուսանողի ուղեցույց:	2016-2017 ուստարվա 2-րդ կիսամյակ	Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Իրավաբան	Դեկանատներ Ուսխորհուրդ Ուսմաս	Հրապարակված ուսանողի ուղեցույց	ՀՖԿՍՊԻ-ի ուսանողի տպագրված ուղեցույց և էլեկտրոնային տարբերակի առկայություն պաշտոնական կայքում:
6.	Վերափոխել կարիերայի կենտրոնի աշխատանքն՝ այն նպատակաուղղելով աշխատաշուկայի կարիքների հետազոտմանը, շրջանավարտների զբաղվածության ուսումնասիրությանը և նրանց հետ կայուն հետադարձ կապի ապահովմանը:	2017-2018 ուստարվա 1-ին կիսամյակ	Պրակտիկայի և կարիերայի կենտրոն	Պրակտիկայի և կարիերայի կենտրոն Ուսխորհուրդ ՈԱ բաժին	Վերանայված գործառույթներով շրջանավարտների և կարիերայի կենտրոն	Կարիերայի և պրակտիկայի բաժնի նոր կանոնակարգ, շրջանավարտների տվյալների էլեկտրոնային բազա և հիմնադրված ՀՖԿՍՊԻ-ի շրջանավարտների միություն:
7.	Կատարելագործել ուսանողների կրթական կարիքների վերհանման և գնահատման մեխանիզմներն ու ընթացակարգերը՝ մասնակից դարձնելով ուսանողներին:	2017-2018 ուստարի	Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր	Պրակտիկայի և կարիերայի կենտրոն, ամբիոններ Ուսխորհուրդ	Վերանայված և հաստատված ուսանողների կրթական կարիքների վերհանման և գնահատման մեխանիզմներ և ընթացակարգեր	Վերանայված ուսանողների կրթական կարիքների վերհանման և գնահատման կարգ:

<b>Խնդիր 1.4. Բարձրացնել որակի ներքին ապահովման համակարգի կառույցի և գործընթացների արդյունավետությունը</b>						
1.	Իրականացնել որակի ապահովման հաստատված քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետության գնահատում:	2017-2018 ուստարվա 2-րդ կիսամյակ	ՈԱ բաժնի ղեկավար	ՈԱ հանձնաժողով ՈԱ բաժնի	ՈԱ քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետության գնահատման մեխա- նիզմներ	Հրապարակված ՈԱ քաղաքականություն և ընթացակարգեր, արդյունավետության գնահատման գործիքներ:
2.	Մշակել ինստիտուտի գործունեության ոլորտների, ուսումնական ստորաբաժանումների ինքնագնահատման չափանիշները՝ հիմք ընդունելով հավատարմագրման գործող չափանիշները:	2017-2018 ուստարի	ՈԱ բաժնի ղեկավար	ՈԱ բաժին Աշխատանքային խմբեր	Հաստատված հստակ գնահատման գործիքներ և ընթացակարգեր	Մշակված և հրապարակված ուսումնական ստորաբաժանումների ինքնագնահատման և արդյունավետության գնահատման հայեցակարգ և չափանիշներ:
3.	Բարելավել առարկայական ուսումնական ծրագրերի պահանջներին համապատասխան կադրային ռեսուրսների գնահատման, մասնագիտական կրթական ծրագրերի արտոնման գործող ներքին չափանիշները:	2018-2019 ուստարի	Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր	Ուս. մաս Մարդկային ռեսուրսների կառավարման բաժին	Կադրային ռեսուրսների գնահատման գործող ընթացակարգեր	Կադրային ռեսուրսների գնահատման հաստատված գործիքներ և ընթացակարգեր:
4.	Վերանայել ուսանողների ուսումնառության օբյեկտիվ գնահատման, բողոքարկման համակարգը, ապահովել դրանց առավել հրապարակայնությունն ու թափանցիկությունը:	2017-2018 ուստարի	Դեկանատներ Ուսանողական խորհուրդ Ուսումնական մաս	Աշխատանքային խումբ	Վերանայված և հաստատված գնահատման և բողոքարկման կարգեր	Գնահատման համակարգի թափանցիկության ապահովման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:
5.	Մշակել և ուսումնական գործընթաց ներդնել դասախոսների գործունեության գնահատման հատուկ վարկանիշային սանդղակներ:	2017-2018 ուստարի	ՈԱ հանձնաժողով	Աշխատանքային խումբ	Մշակված և հաստատված կանոնակարգ	Դասախոսների գործունեության վարկանիշային գնահատման կանոնակարգ և հաստատված սանդղակներ:
6.	Կատարելագործել կրթական ծրագրերի և ուսումնական գործընթացի արդյունավետ ու որակյալ կառավարման համար պահանջվող ներքին տեղեկատվության փաստաթղթերը:	2018-2019 ուստարի	ՈԱ հանձնաժողով	Աշխատանքային խումբ	Վերանայված, մշակված և հաստատված համապատասխան փաթեթ:	Կրթական ծրագրերի և ուսումնական գործընթացի կառավարման համար պահանջվող փաստաթղթերի փաթեթ:
7.	Մշակել կրթության որակի ապահովմանն ուղղված կառուցվածքային և բովանդակային փոփոխությունների արդյունավետությունը գնահատող մեխանիզմներ:	2017-2018 ուստարի	ՈԱ բաժնի ղեկավար	ՈԱ հանձնախմբեր ՈԱ բաժին Աշխատանքային խումբ	Կառուցվածքային և բովանդակային փոփո- խությունների արդյունա- վետության գնահատումը	Կրթության որակի ապահովմանն ուղղված փոփոխությունների արդյունավետությունը գնահատող հաստատված գործիքներ և ընթացակարգեր:

8.	Սահմանել և կիրառել տեղեկատվության հավաքագրման մեխանիզմներ, որոնք կձևավորեն անհրաժեշտ հիմքեր որակի ներքին և արտաքին գնահատումների համար:	2017-2018 ուստարի	ՈԱ բաժնի ղեկավար	ՈԱ հանձնախմբեր ՈԱ բաժին Ամբիոններ Ստորաբաժանում ներ	Մշակված և կիրառվող հստակ տեղեկատվության քանակ և մեխանիզմներ, որոնք բավարար կլինեն որակի ապահովման ներքին և արտաքին գնահատումների համար	Որակի ներքին ապահովման համակարգի համար անհրաժեշտ հաստատված տեղեկատվության քանակ, հավաքագրման գործիքներ, ժամանակացույց:
9.	Իրականացնել գործընթացների որակի վերաբերյալ տեղեկատվության տարածման համար կիրառվող մեխանիզմների արդյունավետության վերլուծություններ:	2018-2019 ուստարի	ՈԱ բաժնի ղեկավար	ՈԱ բաժին ՈԱ հանձնախմբեր	Որակի վերաբերյալ տեղեկատվության տարածման կիրառվող մեխանիզմների արդյունավետության գնահատական և վերհանված բացթողումներ	Տեղեկատվության տարածման կիրառվող մեխանիզմների արդյունավետության գնահատման գործիք և համապատասխան վերլուծություն:

**Խնդիր 1.5 Ներդնել նորարական կրթական գործընթաց՝ կիրառելով կրթական տեղեկատվական տեխնոլոգիաներն ինստիտուտի բոլոր կրթական ծրագրերում և ուսուցման ձևերում:**

1.	Էլեկտրոնային հարթակի և համացանցի միջոցով ստեղծել նորարական կրթական միջավայր ուսանողների և դասախոսների համար:	2019-2020 ուստարի	Ուսումնական մաս	Աշխատանքային խմբեր	Նորարական կրթական միջավայրի առկայություն	Ուսանողների և դասախոսների շրջանում գործող էլեկտրոնային հարթակ համացանցում:
2.	Մշակել և ներդնել էլեկտրոնային ուսուցման տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացվող ինտերակտիվ դասընթացների չափորոշիչներ:	2019-2020 ուստարի	Ուսումնական մաս	Աշխատանքային խմբեր	Մշակված չափորոշիչներին համապատասխան բաց դասեր	Մշակված և կիրառվող ինտերակտիվ դասընթացների չափորոշիչներ:
3.	Վերապատրաստել դասախոսական կազմը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման և մատուցման համար:	2019-2020 ուստարի	Միջազգային գիտատեղեկատվական կենտրոն Ուսումնական մաս	Աշխատանքային խմբեր	Էլեկտրոնային ռեսուրսների կիրառում դասավանդման գործընթացում:	Էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման և մատուցման կարողություններով դասախոսական կազմ:
4.	Ներդնել խրախուսման մեխանիզմներ՝ դասավանդման գործընթացում ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսներ կիրառող դասախոսական կազմի համար:	2019-2020 ուստարի	Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր	Աշխատանքային խմբեր	Էլեկտրոնային ռեսուրսների կիրառմամբ դասընթացների թվի աճ:	Ինտերակտիվ միջոցներով դասավանդող դասախոսական կազմի խրախուսման հաստատված մեխանիզմների առկայություն: Արձանագրություններ այդ դասընթացների վերաբերյալ՝ ըստ ամբիոնի նիստերի

5.	Ապահովել կրթական ծրագրերը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսներով:	2019-2021 ուստարի	Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր	Աշխատանքային խմբեր	Շահակիցներին հասանելի ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսներ	Առնվազն 2 մասնագիտական կրթական ծրագիր՝ ապահովված էլեկտրոնային ռեսուրսներով:
6.	Հեռակա ուսուցման դասընթացներն ապահովել համապատասխան էլեկտրոնային ռեսուրսներով:	2019-2021 ուստարի	Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր	Ամբիոններ	Ուսանողների բավարարվածությունը էլեկտրոնային ռեսուրսներով ապահովված դասընթացներից	Առնվազն 5 հեռակա ուսուցման դասընթացներ՝ ապահովված համապատասխան էլեկտրոնային ռեսուրսներով:
7.	Մշակել և իրականացնել առցանց դասընթացները:	2019-2020 ուստարի	Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր	Ամբիոններ	Առցանց դասընթացներից օգտվող ուսանողների բավարարվածության գնահատում	Մշակված և առցանց եղանակով գործող առնվազն 5 ուսումնական դասընթացներ:

**ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 2. ԱՐԴԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Խնդիր 2.1. Նպաստել ինստիտուտում գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:**

№	Գործողություն	Ժամանակացույց	Պատասխանատու	Ռեսուրս (մարդկային, ֆինանսական)	Վերջնարդյունք	Արդյունքի գնահատման ցուցիչ (ԱԳՑ)
1.	Մշակել և ներդնել համապատասխան մեխանիզմներ տեղական և միջազգային ամսագրերում հոդվածների հրապարակումները խրախուսելու համար:	2017-18 ուստարի	Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր	Միջազգային և գիտատեղեկատվական կենտրոն Հաշվապահական հաշվառման բաժին	Տեղական և միջազգային ամսագրերում տպագրված հոդվածներ	Տեղական և միջազգային ամսագրերում հրապարակումների խրախուսման գործող կարգ: Հրապարակումների թվի աճ միջազգային գրախոսվող և բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում: Գիտական կոնֆերանսների մասնակիցների թվի աճ:
2.	Խթանել միջառարկայական հետազոտությունները և դրանց համապատասխան սահմանել ներբուհական հետազոտության նոր առաջնահերթություններ:	2017-18 ուստարի 1-ին կիսամյակ	Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր	Ինստիտուտի ամբիոններ ՈՒԳԸ	Միջառարկայական հետազոտությունների հնարավորություններն ուսումնասիրող աշխատանքային խումբ	Միջառարկայական գիտահետազոտական աշխատանքների հաստատված թեմաների առկայություն բուհի հետազոտական առաջնահերթությունների ցանկում:
3.	Դիտարկել գիտահետազոտական և գիտատեղեկատվական գործունեությամբ զբաղվող	2017-18 ուստարվա 2-րդ	Ուսումնագիտական աշխատանքների	Միջազգային և գիտատեղեկատվ		Ինստիտուտի գիտատեղեկատվական կենտրոնի գործա-

	ստորաբաժանումների միավորման նպատակահարմարությունը:	կիսամյակ	գծով պրոռեկտոր	ական կենտրոն		ռոյթների միավորում գիտատեղեկատվական բաժնի գործունեության հետ:
4.	Աշխատանքներ տանել միջազգային հետազոտական համագործակցության և հետազոտական ցանցի ստեղծման ուղղությամբ:	2017-18 ուստարվա 1-ին կիսամյակ	Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր	Միջազգային և գիտատեղեկատվական կենտրոն, աշխատանքային խմբեր, դասախոսներ	Մշակված և հաստատված ինստիտուտի գիտ. գործունեության վերաբերյալ մեթոդական ցուցումներ, ուր ներառված են միջազգային համագործակցության և հետազոտական ցանցի ընդլայնման խնդիրները	Հանդիպումների արձանագրություններ: Կայքում տեղադրված ինստիտուտի գիտահետազոտական գործունեության կատարման մեթոդական ցուցումներ
5.	Տանել աշխատանքներ տեղական և միջազգային դրամաշնորհային ծրագրերում ընդգրկվելու ուղղությամբ, որոնց միջոցներով ստեղծել գիտահետազոտական լաբորատորիաներ՝ ժամանակակից սարքավորումներով:	2017-2018 ուստարի	ՈԱ բաժին	ՈԱ բաժին Դրամաշնորհային ծրագիր	Գործող գիտահետազոտական կենտրոն	Առնվազն մեկ դրամաշնորհային ծրագրի միջոցներով գիտահետազոտական կենտրոնի ստեղծում:
6.	Նպաստել ինստիտուտի գիտական դպրոցի կողմից ստացված արդյունքների ներկայացման և քննարկման նպատակով միջազգային և հանրապետական գիտաժողովների կազմակերպմանը ոլորտի տարբեր ուղղություններով:	2017-2018 ուստարի, 2018-2019 ուստարի	Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր	Միջազգային և գիտատեղեկատվական կենտրոն, աշխատանքային խմբեր, դասախոսներ	Հրապարակված նյութերի ժողովածուներ ըստ տարիների	Ինստիտուտի գիտական դպրոցի կողմից ստացված արդյունքների հիման վրա կազմակերպված միջազգային և հանրապետական գիտաժողովների օրակարգեր և տպագրված նյութեր:

**Խնդիր 2.2. Նպաստել գիտահրատարակչական գործունեության արդյունավետության բարձրացմանը:**

1.	Ավելացնել ինստիտուտի դասախոս-գիտնականների արդիական և որակյալ աշխատանքների տպագրությունները:	2018-2019 ուստարի	Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր	Միջազգային և գիտատեղեկատվական կենտրոն, աշխատանքային խմբեր, դասախոսներ	Տպագրված աշխատանքներ	Ինստիտուտի դասախոս-գիտնականների աշխատանքների տպագրությունների թվաքանակի աճ: Հրատարակումների ցուցակներն ըստ տարիների
2.	Հիմնել համատեղ հրապարակվող պարբերականներ օտարերկրյա ուսումնական հաստատությունների հետ:	2018-2019 ուստարի	Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր	Միջազգային և գիտատեղեկատվական կենտրոն	Հրապարակված պարբերականներ	Օտարերկրյա ուսումնական հաստատությունների հետ համատեղ առնվազն երկու պարբերականների հրապարակում:
3.	Նպաստել միջազգային բարձր վարկանիշ	2019-2020	Ուսումնագիտական	Միջազգային և	Դասախոսական կազմի	Միջազգային բարձր վարկա-

	ունեցող պարբերականներում ինստիտուտի դասախոսների և հայցորդների գիտական նյութերի հրատարակմանը:	ուստարի	աշխատանքների գծով պրոռեկտոր	գիտատեղեկատվական կենտրոն	խրախուսման մեխանիզմների կիրարկում	նիշ ունեցող պարբերականներում ինստիտուտի դասախոսների և հայցորդների հրատարակված գիտական նյութերի ցանկ:
4.	Մշակել գիտահետազոտական աշխատանքների սոցիալական ազդեցության գնահատման գործիքներ:	2017-18 ուստարի	Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր	Միջազգային և գիտատեղեկատվական կենտրոն, աշխատանքային խմբեր	Գիտահետազոտական աշխատանքների սոցիալական ազդեցության գնահատական Սոցիալական ազդեցության գնահատման լավ փորձի օրինակներ	Գիտահետազոտական աշխատանքների սոցիալական ազդեցության գնահատման հաստատված գործիքներ և ընթացակարգ, ազդեցության գնահատման հաշվետվություններ:
5.	Ապահովել գիտահետազոտական ծրագրերում ասպիրանտների և մագիստրանտների մասնակցության ընդլայնում:	2018-2019 ուստարի	Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր	Միջազգային և գիտատեղեկատվական կենտրոն, աշխատանքային խմբեր, դասախոսներ	Միջազգային և գիտատեղեկատվական կենտրոն, աշխատանքային խմբեր	Ասպիրանտների և մագիստրանտների մասնակցությամբ իրականացվող գիտահետազոտական ծրագրերի թվի աճ:
6.	Ստեղծել միջազգային գործընկեր բուհերի հետ առցանց տեսակոնֆերանսների և սեմինար-խորհրդակցությունների անցկացման սրահ:	2018-2019 ուստարի	ՈԱ բաժին	Ստորաբաժանման ղեկավարներ	Իրականացված տեսակոնֆերանսների արձանագրություններ	Ինստիտուտի և այլ ֆինանսական միջոցներով ստեղծված ժամանակակից սարքավորումներով հագեցված առնվազն մեկ տեսակոնֆերանսի կազմակերպման սրահ:

**Խնդիր 2.3. Խթանել ինստիտուտում հետազոտական գործունեության միջազգայնացումը:**

1.	Աջակցել արտասահմանյան գործընկերների հետ համագործակցության շարունակականությանն ու խորացմանը:	2018-2021 ուստարի	Ստորաբաժանման ղեկավարներ	Միջազգային և գիտատեղեկատվական կենտրոն, ՈԱ բաժին	Գործող գիտահետազոտական ծրագրեր	Արտասահմանյան գործընկերների հետ համատեղ երկարաժամկետ գիտահետազոտական ծրագրերի առկայություն:
2.	Ապահովել ինստիտուտի գիտամանկավարժական կադրերի կողմից մշակված նորարարությունների միջազգայնացումը:	2018-2019 ուստարի	Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր	Միջազգային և գիտատեղեկատվական կենտրոն, Ստորաբաժանման ղեկավարներ	Հրատարակված պարբերականներ	Ինստիտուտի գիտամանկավարժական կադրերի կողմից մշակված նորարարական մեթոդների և միջոցների ներկայացում միջազգային մասնագիտական պարբերականներում:
3.	Նախագծել և իրականացնել միջազգային	2018-2019	Ուսումնագիտական	ՈԱ բաժին,	Վերապատրաստված	Առնվազն երկու միջազգային



	համատեղ վերապատրաստման և որակավորումների բարձրացման ծրագրեր:	ուտարի	աշխատանքների գծով պրոռեկտոր	Ուսումնական մաս	առնվազն 10 դասախոս, հաշվետվություններ	համատեղ վերապատրաստման և որակավորումների բարձրացման ծրագրերի առկայություն:
4.	Նպաստել արտասահմանյան հաստատությունների գիտական կադրերի պատրաստմանն ինստիտուտի գիտական բազայի հիման վրա:	2019-2020 ուտարի	Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր	Միջազգային և գիտատեղեկատվական կենտրոն, Ստորաբաժանման ղեկավարներ		Ինստիտուտում առաջարկվող գիտահետազոտական ծրագրերում ներգրավված արտասահմանյան գիտական կադրերի աճ:

**ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 3. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ**

**Խնդիր 3.1. Շարունակել համալրել պրոֆեսորադասախոսական կազմը կրթական ծրագրերի որակի ապահովման արդի պահանջներին համահունչ:**

1.	Սահմանել և փաստաթղթավորել կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան դասախոսական կազմին ներկայացվող կոմպետենցիաները:	2017-18 ուտարվա I կիսամյակ	Ուսումնագիտական աշխատանքների պրոռեկտոր	ՈԱ հանձնաժողով ՈԱ բաժին Կադրերի բաժին Ուսումնական մաս Ամբիոններ	Կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան դասախոսական կազմին ներկայացվող փաստաթղթավորված կոմպետենցիաներ	Դասախոսական կազմին ներկայացվող կոմպետենցիաների պահանջների ցանկի առկայություն կրթական ծրագրերում:
2.	Մշակել դասախոսների կարիքների վերհանման մեխանիզմներ, աջակցել դասախոսական կազմի մասնագիտական որակների կատարելագործմանը, նպաստել ոլորտում գիտական աստիճան ունեցող դասախոսների աճին:	2018-2019 ուտարվա 1-ին կիսամյակ	Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր	ՈԱ բաժին Ուսումնական մաս Աշխատանքային խումբ	Լրամշակված և հաստատված դասախոսների կարիքների վերհանման արդյունավետ մեխանիզմներ Վերապատրաստումների իրականացում ըստ կարիքների	Հրապարակված դասախոսների կարիքների վերհանման գործիքներ և ընթացակարգեր:
3.	Մշակել և ուսումնական գործընթացում ներդնել դասախոսների գործունեության վարկանիշավորման համակարգ:					Դասախոսների գործունեության գնահատման վարկանիշավորման կարգ:
4.	Սահմանել վարչական աշխատակազմի ձևավորման նորմատիվներ և չափորոշիչներ:	2016-17 ուտարվա 2-րդ կիսամյակ	ՀՖԿՄՊԻ-ի ռեկտոր	ՈԱ բաժին Աշխատանքային խումբ Ուսանողական խորհուրդ	Լրամշակված և հաստատված վարչական աշխատակազմի ձևավորման նորմատիվներ և դրանց համապատասխան վարչակազմ	Հրապարակված և հասանելի նորմեր: Վարչակազմի փոփոխության հրամաններ:

5.	Մշակել դասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի պաշտոնի անձնագրեր:	2017-18 ուստարվա 2-րդ կիսամյակ	Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր	ՈԱ բաժին Կադրերի բաժին Աշխատանքային խումբ Ուս. մաս Ուսխորհուրդ	Հաստատված դասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի պաշտոնի անձնագրեր	Պաշտոնի անձնագրերի ձևաչափեր, հաստատված պաշտոնի անձնագրերի առկայություն ամբիոններում:
6.	Մշակել և իրականացնել ուսումնաօժանդակ կազմի կատարողականի գնահատում:	2017-18 ուստարի	Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր	ՈԱ բաժին Մարդկային ռեսուրսների կառավարման բաժին, Աշխատանքային խումբ Ուսանողական խորհուրդ	Ուսումնաօժանդակ կազմի կատարողականի օբյեկտիվ գնահատում հստակ ընթացակարգերով	Ուսումնաօժանդակ կազմի կատարողականի օբյեկտիվ գնահատում հստակ ընթացակարգերով:

**Խնդիր 3.2. Ջարգացնել ինստիտուտի մարդկային ներուժի կառավարման համակարգը, նպաստել վարչակազմի շարունակական համալրմանն ու որակական առաջընթացին:**

1.	Սահմանել չափորոշիչներ բուհի վարչակազմի և այլ աշխատողների հաստիքների պլանավորման և վերջիններիս ներկայացվող որակական պահանջների ձևավորման համար:	2017-2018 ուստարի 2-րդ կիսամյակ	Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր	Մարդկային ռեսուրսների կառավարման բաժին, Հաշվապահական հաշվառման բաժին	Գործող նորմատիվներ	Վերանայված և հաստատված բուհի վարչակազմի և այլ աշխատողների հաստիքների պլանավորման նորմատիվներ:
2.	Բուհական կրթության բարեփոխումների նպատակով կազմակերպել վարչակազմի կատարելագործման գործընթաց՝ կառավարման նոր մեթոդների ուղղությամբ:	2017-2020 ուստարի	Մարդկային ռեսուրսների կառավարման բաժին	Իրավախորհրդատու ՈԱ բաժին, Աշխատանքային խմբեր	Կազմակերպված սեմինար-խորհրդակցություններ, Վերապատրաստումներ	Շահակիցների բավարարվածության աճ ինստիտուտի կառավարման գործընթացից:
3.	Ավելացնել պրոֆեսորադասախոսական կազմի մասնակցությունը ինստիտուտի կառավարման և որոշումների ընդունման գործընթացում:	2017-2021 ուստարի	Մարդկային ռեսուրսների կառավարման բաժին	ՈԱ բաժին. Դասախոսներ	Հարցաթերթիկային հարցումներ, Ֆոկուս խմբեր	Պրոֆեսորադասախոսական կազմի բավարարվածության աճ ինստիտուտի կառավարման և որոշումների ընդունման գործընթացներին մասնակցությունից:
4.	Շարունակել վարչակազմի փուլային երիտասարդացման քաղաքականությունը, ստեղծել կայուն ռեզերվ և մրցակցային միջավայր:	2017-2020 ուստարի	Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր	ՄՌԿ բաժին, ՈԱ բաժին	Երիտասարդ կադրերով համալրված վարչակազմ	Վիճակագրական տվյալներ
5.	Մշակել և իրականացնել երիտասարդ դասախոսների մանկավարժական և հոգեբա-	2017-2018 ուստարի	Ուսումնագիտական աշխատանքների	Ուսումնական մաս	Վերապատրաստման դասընթացների վերա-	Վերապատրաստված շուրջ 45 երիտասարդ դասախոս:

	նական հմտությունները զարգացնող վերապատրաստման դասընթացներ:		գծով պրոռեկտոր		բերյալ բավարարվածության հաշվետվություններ	
6.	Լրամշակել դասախոսական կազմի ուսումնական բեռնվածության հաշվարկի նորմերը:	2018-20019 ուստարի	Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր	Ուսումնական մաս	Գործող հաշվարկի նորմեր	Լրամշակված և հաստատված դասախոսական կազմի ուսումնական բեռնվածության հաշվարկի նորմեր:

**ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 4. ՈՐԱԿՅԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**Խնդիր 4.1. Ինստիտուտի՝ որպես սոցիալական կողմնորոշում ունեցող բուհի դրական վարկանիշի ստեղծում՝ ի նպաստ դիմորդների ներգրավման**

1.	Ընդլայնել քարոզչական աշխատանքները հանրակրթական դպրոցների և տարբեր մարզադպրոցների շրջանավարտների համար, հատկապես մանկավարժական ու մասնագիտական պրակտիկաների անցկացման շրջանում:	2017-2021 ուստարի	Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր	Պրակտիկայի և կարիերայի բաժին Թողարկող ամբիոններ Ուս. խորհուրդ	Դիմորդների ընդունելության աճ ըստ տարիների	Մանկավարժական ու մասնագիտական պրակտիկաների անցկացման ժամանակ քարոզչական աշխատանքների կազմակերպման հայեցակարգ:
2.	Դիմորդների համար իրականացնել «բաց դռների» քաղաքականություն ողջ ուսումնական տարվա ընթացքում:	2017-2021 ուստարի	Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր	Պրակտիկայի և կարիերայի բաժին Թողարկող ամբիոններ Ուսխորհուրդ	Իրականացրած միջոցառումների արձանագրություններ	«Բաց դռների» միջոցառումների տարեկան պլանների առկայություն:
4.	Մշակել մեխանիզմներ՝ օգնելու Հայաստանի քաղաքների ու մարզերի ավագ դպրոցների աշակերտներին՝ կողմնորոշվելու բուհում գործող մասնագիտությունների ու մասնագիտացումների ընտրության մեջ և մասնակցելու համապատասխան միջոցառումներին:	2017-2018 ուստարի	Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր	Պրակտիկայի և կարիերայի բաժին Թողարկող ամբիոններ Ուսխորհուրդ	Իրականացրած միջոցառումների հաշվետվություններ	Մասնագիտական կողմնորոշման աջակցության մշակված մեխանիզմներ և ուղեցույցներ:
5.	Կազմակերպել Ինստիտուտում իրականացվող մասնագիտությունների շնորհանդեսներ:	2017-2021 ուստարի	Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր	Պրակտիկայի և կարիերայի բաժին Թողարկող ամբիոններ Ուս. խորհուրդ	<<Կրթություն և Կարիերա EXPO>> ցուցահանդեսների մասնակցություն	Մասնագիտությունների շնորհանդեսների առկայություն:

**Խնդիր 4.2. Կազմակերպել աշակերտների շրջանում ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի, տարբեր մարզաձևերի մարզչի, մարզական լրագրողի, առողջարարական և աղապատացված ֆիզիկական կուլտուրայի մասնագիտության գրավչության ամրապնդմանը, նման կողմնորոշում ունեցող դիմորդների ներգրավմանը նպաստող միջոցառումներ:**

1.	Վերամշակել ինստիտուտի դիմորդի ուղեցույցը և տարածել հանրակրթական ու մար-	2018-2019 ուստարի	Պրակտիկայի և կարիերայի բաժին	Թողարկող ամբիոններ	Տեղեկացված դիմորդներ	Լրամշակված և հրապարակված դիմորդի ուղեցույց:
----	-------------------------------------------------------------------------	-------------------	------------------------------	--------------------	----------------------	---------------------------------------------

	զադպրոցների աշակերտների ու պատանի մարզիկների շրջանում:					
2.	Ստեղծել հավանական դիմորդների հետ սոցիալական ցանցերում համագործակցության համակարգ՝ նոր դիմորդների ներգրավման նպատակով:	2018-2019 ուստարի	Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր	Միջազգային և գիտատեղեկատվական կենտրոն, Ամբիոններ	Դիմորդների կարիքները/հետաքրքրությունները բավարարող գործող ցանց	Գործող առնվազն մեկ սոցիալական ցանց հավանական դիմորդների հետ կողմնորոշիչ աշխատանքներ իրականացնելու նպատակով:
3.	Պարբերաբար անցկացնել տեսական և գործնական սպորտային մանկավարժական խնդիրներին նվիրված հանդիպումներ, կոնֆերանսներ, սեմինարներ հանրապետության կրթական ու մարզական հաստատություններում:	2017-2021 ուստարի	Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր	Ամբիոններ, Ուս. խորհուրդ	Իրականացված միջոցառումներ՝ մասնագիտական կողմնորոշում ունեցող դիմորդների ներգրավման նպատակով	Տեսական և գործնական սպորտային, մանկավարժական խնդիրներին նվիրված հանդիպումների և սեմինար խորհրդակցությունների ժամանակացույցի առկայություն, հանդիպումների արձանագրություններ:
4.	Կազմակերպել հեռուստատեսային հաղորդումների շարք՝ նվիրված ինստիտուտում իրականացվող մասնագիտություններին և մարզական մասնագիտացումներին:	2018-2021 ուստարի	Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր	Ամբիոններ, Ուս. խորհուրդ	Տեղեկատվական տեսանյութեր, շնորհանդեսներ	Գործող գովազդային տեսանյութեր ինստիտուտում իրականացվող մասնագիտությունների վերաբերյալ

**Խնդիր 4.3 Մշակել ուսանողների շրջանում ուսանողական կազմակերպությունների դերի բարձրացմանը նպաստող միջոցառումների համակարգ:**

1.	Ապահովել ուսանողական կազմակերպություններում ընդգրկված ուսանողներին համապատասխան ռեսուրսներով՝ տեղական և արտագնա կոնֆերանսներին մասնակցելու համար:	2017-2021 ուստարի	Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր	Ուս. խորհուրդ, ՈՒԳԸ	Տեղական և արտագնա կոնֆերանսներին մասնակցած ուսանողների տվյալներ:	Ուսանողական կազմակերպություններին տրամադրված ռեսուրսների աճ: Ուսանողների բավարարվածությունը տրամադրված ռեսուրսներից:
2.	Մշակել ուսանողական կազմակերպություններում ակտիվ գործունեություն ծավալող լավագույն ուսանողների խրախուսման համակարգ:	2018-2019 ուստարի	Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր	Ուս. խորհուրդ, ՈՒԳԸ	Լավագույն ուսանողների թվի աճ	Լավագույն ուսանողների խրախուսման գործող կարգ:
3.	Զարգացնել ուսանողներին մատուցվող խորհրդատվական և լրացուցիչ կրթական ծառայությունները:	2017-2018 ուստարի	Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր	Դեկանատներ, Խորհրդատուներ	Ուսանողների բավարարվածությունը մատուցվող կրթական ծառայություններից	Վերաձևավորված ուսանողական խորհրդատուների ինստիտուտ:
4.	Նպաստել ուսանողական կազմակերպություններում ընդգրկված ուսանողների մարզական, ստեղծագործական, գեղարվեստա-	2017-2021 ուստարի	Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր	Ամբիոններ, Խորհրդատուներ	Կազմակերպված միջոցառումների լուսաբանում բուհի պաշտո-	Մարզամշակութային ծրագրեր:

	կան շփման կարողությունների ձևավորմանը:				նական կայքում, ինստիտուտի ֆեյսբուքյան էջում	
<b>Խնդիր 4.4 Բարձրացնել ինստիտուտում ուսումնառությունից և ուսանողական օժանդակ ծառայություններից ուսանողների գոհունակության մակարդակը:</b>						
1.	Պլանավորել, կանոնակարգել և իրականացնել շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տվյալների հավաքագրման գործընթաց՝ շրջանավարտների և գործատուների հետ ստեղծելով հետադարձ կապի համակարգեր:	2017-2021 ուստարի	Պրակտիկայի և կարիերայի բաժին	Պրակտիկայի և կարիերայի բաժին Թողարկող ամբիոններ Ու. Խորհուրդ	Միության հաստատված կանոնադրություն Հարցումների արդյունքների վերլուծություններ Հանդիպումների արձանագրություններ	Շրջանավարտների էլեկտրոնային բազա: Գրանցված շրջանավարտների միություն:
2.	Մշակել պետական ու ներքուհական կրթաթոշակների, ուսումնական նպաստների ու վարկերի համակարգերի հնարավորություններն առավել արդյունավետ օգտագործման հայեցակարգ:			Հաշվապահական հաշվառման բաժին		Մշակված և գործող հայեցակարգ պետական ու ներքուհական կրթաթոշակների ուսումնական նպաստների ու վարկերի համակարգերի հնարավորություններն առավել արդյունավետ օգտագործելու նպատակով:
3.	Զարգացնել ուսանողների տեղեկատվական-խորհրդատվական, կարիերայի նախապատրաստման, աշխատատեղերի որոնման, կրթական գործընթացի որակի բարձրացման օժանդակության ծառայությունները:	2017-2021 ուստարի	Պրակտիկայի և կարիերայի բաժին	Պրակտիկայի և կարիերայի բաժին, Խորհրդատուներ, ՈԱ բաժին	Հարցումների արդյունքների վերլուծություններ	Ուսանողների բավարարվածության աճ տեղեկատվական-խորհրդատվական, կարիերայի նախապատրաստման օժանդակ ծառայություններից:
4.	Ընդլայնել կարիքավոր ուսանողների աջակցման և կարիքների բավարարման շրջանակները:	2017-2021 ուստարի	Դեկանատներ	Խորհրդատուներ, Ամբիոններ, Ու.Խորհուրդ	Գործող կարգ	Վերանայված կարգ կարիքավոր ուսանողների աջակցման և կարիքների բավարարման վերաբերյալ:
5.	Լրամշակել ուսանողների իրավունքների և պարտականությունների ձևավորման քաղաքականությունը:	2017-2018 ուստարի	Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր	Դեկանատներ, ՈԱ բաժին	Ինստիտուտի կայքում տեղադրված ուղեցույց:	Լրամշակված և հաստատված ուսանողի ուղեցույց:

**ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 5. ՈՐԱԿՅԱԼ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

<b>Խնդիր 5.1 Ռազմավարական հեռանկարում կատարելագործել ինստիտուտի կազմակերպական կառուցվածքը և բարձրացնել կառավարման արդյունավետությունը</b>						
1.	Վերանայել ՀՖԿՍՊԻ-ի կազմակերպական կառուցվածքը՝ հստակեցնելով բոլոր ստո-	2017-2018 ուստարվա 1-ին	ՀՖԿՍՊԻ-ի ռեկտոր	ՈԱ հանձնաժողով, Իրավաբան,	Բուհի կառավարման կառուցվածքի արդյու-	Ինստիտուտի վերանայված կազմակերպական կառուց-

	րաբաժանումների փոխկապակցվածությունը և գործառնական փոխհարաբերությունները, ամրագրել ինստիտուտի բոլոր աշխատակիցների գործառույթները:	կիսամյակ		Աշխատանքային խմբեր	նավետության գնահատականի ան	վաճք՝ ստորաբաժանումների և աշխատակիցների հստակ սահմանված գործառույթներով:
2.	Մշակել մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականություն՝ ուղղված ստորաբաժանումների համապատասխան կադրային ռեսուրսներով ապահովվածությանը: Ստեղծել ինստիտուտի ներուժի նպատակային օգտագործմանը նպաստող պայմաններ՝ առանցքային գործընթացների առանձնացման, դրանց արդյունավետության բարձրացման միջոցով:	2017-2018 ուստարվա 2-րդ կիսամյակ	ՀՖԿՄՊԻ-ի ռեկտոր	ՈԱ հանձնաժողով ՈԱ բաժին Կադրերի բաժին	ՀՖԿՄՊԻ-ի մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականություն Շահակիցների բավարարվածությունը մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականությունից	Շահակիցներին բավարարող ՀՖԿՄՊԻ-ի հաստատված մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականություն:
